



ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՏՈՆ

Թարգմանության պատմությունն սկսվում է քաղաքակրթության պատմությամբ:

Հենց սկզբից տարբեր բարբառներն ու լեզուները ուղեկցում էին մարդկությանը: Բաբելոնյան աշտարակաշինության պատմությունը ցույց է տալիս, որ հին աշխարհում մարդիկ ինչքան սուր էին զգում տարբեր լեզուներով խոսող մարդկանց միջև հաղորդակցություն հաստատելու անհրաժեշտությունը: Թեև մարդկության պատմությանը պոզընթաց վարձանում էր թարգմանության արվեստը, բայց այն իր բուն վարձագումն ապրեց հատկապես քրիստոնեական կրոնի տարածման շրջանում: Տարբեր ժողովուրդների և ազգերի կողմից նոր կրոնի ընդունումը անհրաժեշտորեն ուղեկցվում էր այդ նույն կրոնի հիմնական աղբյուրի՝ Աստվածաշնչի թարգմանությամբ:

Հայ թարգմանական արվեստը սկիզբ է առնում Ե դարից, երբ 406 թ. Ս. Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայկական այբուբենը: Սեփական գրերի ստեղծումը դարակապմկի իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում: Ս. Մեսրոպ Մաշտոցը հայ ժողովրդի ձեռքը տվեց անփոխարինելի մի վենք՝ պաշտպանելու համար իր ազգային ինքնությունը և պատությունը:

Բայց այբուբենի ստեղծումը միայն սկիզբն էր: Անհրաժեշտ էր ունենալ հայալեզու գրականություն: Եվ այդ գրականությունն սկսվեց Ս. Սահակ Պարթևի և Ս. Մեսրոպ Մաշտոցի ու նրանց աշակերտների կողմից կատարված Աստվածաշնչի թարգմանությամբ, որով նաև հիմք դրվեց հայ թարգմանական արվեստի:

Ե դարից սկսած թարգմանական գրականությունը հայ մշակույթի վարձացման գործում և առհասարակ մեր ժողովրդի եկե-

ղեցական, հասարակական, քաղաքական կյանքում առանձնահատուկ դեր կատարեց:

Առաջին խորհրդանշական խոսքը, որ թարգմանվեց հայերեն ու հնչեց իբրև կոչ՝ ուղղված հայ ժողովրդին, եղավ Աստվածաշնչի Սողոմոնի առակների առաջին նախադասությունը. «Ճանաչել զիմաստությունն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Իրապես իմաստությունն ու հանճարի խոսքը պետք է առաջնորդեր հայ ժողովրդին նրա գոյապայքարում: Աստվածաշնչի թարգմանությամբ և այդ թարգմանության ոգուն հարակատ ստեղծվեցին Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու, Կորյունի, Եղիշեի, Փավստոս Բյուզանդի, Ղապար Փարպեցու, Եսնիկ Կողբացու դասական առաջին գործերը, որոնք դարձան հայ գրականության փառապատկը: Մանուկ Աբեղյանը Աստվածաշնչի թարգմանության մասին գրել է. «Աստվածաշնչի լեզուն հենց սկզբից մեր հին գրականության համար դարձել է կլասիկական իր քերականությամբ, իր բառերով ու դարձվածքներով, պատկերավոր ասացվածքներով ու բանաձևերով.... ոչ միայն կրոնական, այլև պատմական ու բանաստեղծական երկերի համար»:

Հայերեն Աստվածաշնչի թարգմանությունը ոչ միայն բարձր են գնահատել հայ գիտնականները, այլ նաև օտար հեղինակները, որոնք այն կոչել են «թարգմանությունների թագուհի»:

Մեծ և անգնահատելի է եղել հինգերորդ դարի թարգմանիչների կատարած աշխատանքը ինչպես հայ մշակույթի և գրականության վարձացման, այնպես էլ համաշխարհային գրականության որոշ նմուշների պահպանման համար: Գրական աշխարհին հայտ-

նի է, որ Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնը», Փիլոն Ալեքսանդրացու յոթ աշխատությունները, Արիստիդես Աթենացու և այլ հեղինակների գործեր մինչև այժմ պահպանվել են միայն հայերեն թարգմանությամբ: Այստեղ տեղին է նշել ԺԸ դարի բանասեր, հայագետ Վիլֆրուայի խոսքերը՝ «Այն սերը, զոր ունեցեր են Հայք ի գիտություն և հուսումն հռչակավոր լեզվաց զոր հիշեցինք, պատմական և մեծապես սիրելի պետք է ընեն մեզ այդ ազգը: Վասն զի այն միջոցով՝ իրենց մեջ երևացած իմաստունք՝ նույն լեզուներով գտնված ընտրելագույն երկասիրությունները թարգմանելով, ամենն ավելի իմաստուն գրող ավանդապահ ըրին զՀայաստան աշխարհ»:

Հայ ժողովուրդը և Հայ Առաքելական Եկեղեցին, բարձր գնահատելով մեր սուրբ թարգմանիչների վաստակը, անմահացրել են նրանց հիշատակը և դարեր շարունակ, ամեն տարվա հոկտեմբեր ամսին, նշել են թարգմանչաց տոնը, որ անվանվում է՝ «Սրբոց թարգմանչաց վարդապետաց մերոց՝ Մեսրոպայ, Եղիշեի, Մովսիսի քերթողին, Դաթի Անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացուն և Ներսիսի Կլայեցուն»: Սա աննախադեպ երևույթ է ամբողջ աշխարհում:

Ամուր պահելով մեր ժողովրդի մշակութային արժեքները՝ անցյալի հայրենի գրականության մշակները հաջորդաբար նոր սերնդին փոխանցեցին թարգմանական արվեստի այդ գեղեցիկ ավանդությունը, որը հասավ մինչև մեր օրերը:

Ի հավարժացումն մեր անմահ թարգմանիչների կատարած գործի, Հայաստանի կառավարությունը սիրով ընդառաջեց գրողների միության առաջարկին, թարգմանական արվեստի տոնը պետականորեն նշելու մասին: Այդ տոնը պետք է անցկացվի երեք տարին մեկ՝ հանրագումարի բերելով թարգմանչական նոր գործերի արդյունքները և առաջադրված խնդիրները:

Ինչպես 1979 թվականին, այնպես էլ սույն թվականի հոկտեմբերի 31-ին թարգմանական արվեստի տոնը հանդիսավորապես բացվեց Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:

Բավմադարյան ու բավմահարուստ թարգմանչական արվեստ ունեցող հայ ժողովուրդը նորից հյուրընկալեց տարբեր ազգերի գրական մշակներին: Թարգմանչաց արվեստի տոնին իրենց մասնակցությունը բերեցին միութենական հանրապետությունների հայտնի թարգմանիչներ, թարգմանության տեսաբաններ և հեղինակավոր ջատ գրողներ:

Տոնի կապակցությամբ հաստատվել են հատուկ մրցանակներ:

Թարգմանական արվեստը եղել և մնում է ժողովուրդների բարեկամության (հաստատման և ամրապնդման ձևերից մեկը: Այն սերտացնում և ամրապնդում է ազգային գրականության կապերը, մեծացնում գեղարվեստական թարգմանության նշանակությունը, որի շնորհիվ ազգային գրականությունները մոտք են գործում համաշխարհային ասպարեզ:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը հաճույքով և սիրով ներկայացնում է թարգմանչաց տոնի առթիվ գրված երկու ստեղծագործություն՝ թարգմանված սովետահայ բանաստեղծներ Սիլվա Կապուտիկյանի և Վահագն Դավթյանի կողմից:

Ներկայացնում ենք նաև մի հատված Վ. Դավթյանի «Լույս առավոտի» շարքից:

ՄԱՐԿ ՌԻՇԿՈՎ

(Ռուսաստան)

ՄԵՍՐՈՂ ՄԱՇՏՈՑԻՆ

Ապրում եմ ես հեռվում, Ուրալ լեռնաստանում, Խոհուն Եվրոպայի և Ասիայի ափին
Եվ իմ հեռու-հեռվից Արարատն եմ տեսնում, Ու տեսնում եմ նրան՝ Սուրբ Մեսրոպին:

Հաճախ անկարող եմ տարածություն ու դար, Երբ որ սիրտն է ձգտում հասնել ուրիշ սրտի... Ոչ-հայկական մի ձեռք՝ հայերենով անվարժ «Մեսրոպ» գծագրում է ձերմակ թղթին...

Նա ճառագեց, երբ դեռ չկար լույսի երիզ, Նա առաքեց երկրին արև, գիր ու ոգի. Անցան դարեր, և արդ, ինձ էլ, հեռավորիս, Լույս է տալիս ջահը Սուրբ Մաշտոցի:

Ժամանակի հողմը փշրեց նավը հայոց, Պատռեց առագաստը փոթորկակոծ ճամփին, Կտրատվել է հողը սահմանների սրով, Սահման չկա, սակայն, Սուրբ Մեսրոպին:

Տողը ամրոց է մի, որ չեն կարող առնել, Տողը՝ մոխրից անգամ կենի, կտրոփի. Մոխիրների միջից հազար անգամ հառնել Եվ ապրում է գիրը Սուրբ Մեսրոպի:

Նա գրերը ցանեց ճիշտ սերմերի նման, Բարձրացել է բերքը ու դեռ ծփա պիտի, Ոչ-հայկական մի սիրտ՝ ռուս հասարակ
մի մարդ

Օրհներգում է լույսը Սուրբ Մեսրոպին...

Թարգմանությունը՝ Ս. ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ